ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 4427-Ա « 30 »հոկտեմբերի2025թ.

ԵՐԵՎԱՆ, ԱՐԱԲԿԻՐ, ԿԻԵՎՅԱՆ 2-ՐԴ ՓԱԿՈՒՂՈՒ Հ.31 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՐՅՈԺԱ ԳԱՐԵԳԻՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 20-Ի Հ.2982-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Սերյոժա Գարեգինի Վարդանյանի (ծնված 11.05.1955թ.) դիմումը: Երևանի Արաբկիր վարչական շրջան, Կիևյան 2-րդ փակուղու հ.31 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 296.3քմ:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ կադաստրի կոմիտեի 09.10.2023թ. հ.ԱՏ-09102023-01-0955 տեղեկանքը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 12.09.2025թ. հ.20-Ել-2982 եզրակացությունը, համաձայն որի ք.Երևան, Արաբկիր, Կիևյան 2-րդ փակուղու հ.31 հասցեում բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 1.1-ի կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին հոդվածով.

1.ՈՒԺը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի 2009 թվականի ապրիլի 20-ի «Կիևյան 2-րդ փակուղու հ.31 բնակելի տան նկատմամբ Սերյոժա Գարեգինի Վարդանյանի գույքային իրավունքները վերականգնելու, 37.97քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» հ.2982-Ա որոշումը:

2. Վերականգնել ք.Երևան, Արաբկիր, Կիևյան 2-րդ փակուղու հ.31 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Սերյոժա Գարեգինի Վարդանյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ 296.3քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 296.3քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

3.Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

4. Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի N 204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը՝ ք.Երևան, Արաբկիր, Կիևյան 2-րդ փակուղու հ.31 հասցեում գտնվող 296.3քմ ընդանուր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:

5.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

7.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ